13894

Ն 44 / 2433
13894

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

ՏՓԽԻՍՈՒ ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Տփխիսու Հայոց Նորաշէն եկեղեցւոյ սուրբ Մարիամեան օրիորդաց ձրիավարժ ուսումնարանի Հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնել ի գիտութիւն ամենեցուն։

ա. Այս տարուայ հարցաքննութիւնը որի մասին համաձայն օրագրի ի 29 անցեալ մայիսի հաղորդված է թեմական տեսչին պ. Բարխուդարեանցին՝ սկսվեց յունիսի 1-ին և վերջացաւ 11-ին։

բ. Օրիորդները բոլոր առարկաների մէջ անհամեմատ առաջադէմ գտնվեցան այս ուսումնական տարուայ մէջը բացի կրօնից, հայրենագիտութիւնից և գծագրութիւնից, որոնց մասին կը խօսենք առանձնապէս ներքևը։

գ. Առաջին և երկրորդ դասատունների օրիորդները թուաբանութեան մէջ, որի ուսուցիչն էր պ. Տեսուչ Ջաշիտեանը, այնքան գերազանց էին, մանաւանդ որ զանազան գրաւոր ամենադժուար խնդիրները շատ հեշտութեամբ էին վճռում և վճռելուց յետոյ հաստատում էին ամենահիանալի կերպով, որ մինչև անգամ պ. ասիստէնտները զարմացած էին նրանց մտաւոր և գործնական հարցերի լուծման վերայ բոլոր գործողութեանց մէջ մինչև կոտորակները, մինչդեռ պ. Ջաշիտեանցի նախորդ Յարոյի ժամանակը վերջին դասատնում հազար թուանշանից աւել դժուարութեամբ էին գրում։

դ. Բաւականին յառաջադէմ էին և նկատողական առարկայի մէջ, որի ուսուցիչն է պ. Գուլլակեանը։

ե. Նոյնպէս բաւարար գտնվեցան աշակերտուհիք և պ. Դիվանեանի դասատութեան մէջ պատրաստականում հայոց լեզուում։

զ. Բացի այս առաջադէմ էին պատրաստականի օրիորդները ռուսաց լեզուում, իսկ բարձր դասատունների բոլոր աշակերտուհիքը ռուսաց և հայոց լեզուի վայելչագրութիւնից, որոց ուսուցչուհիք էին ռուսաց լեզուից պատրաստական դասատնում և վայելչագրութիւնից միւս դասատանց վարժուհի օր. Շիրյանը, իսկ հայոց լեզուի վայելչագրութիւնից օր. Մատինեանը, որն օրիորդաց այս գրութիւնից նախակրթական դասատան մէջ ևս մինչև երկու ամիս ձրի է պարապել օրիորդների հետ բացի ձրի վարժութիւնից։

13894

1882.

նից։ Նոյնպէս առաջադէմ էին և ա. և բ. դասատան աշակերտուհիք ռուսաց լեզուից, որի ուսուցիչն էր նոյն պ. Ջաշիտեանը։

է. Այս երկու օրիորդները յանձն առած էին նոյնպէս և կարերի դասատուութիւնը. օր. Շիրյեանը երկու բարձր դասատուններում, իսկ օր. Մատինեանը պատրաստականում։ որպիսի դասատուութիւնը թէ այս վերջնումը և թէ բարձր դասատներում բոլորովին յաջողակ և լաւ էին։ Մանաւանդ բարձր երկրորդ դասատնում։ Վերայասութիւնը կարերի վերայ յանձնած էր տիկին Ս. Իզմիրեանցին և Մ. Կուսիկեանցին, որոնք նոյնպէս բաւականին աշխատասէր գտնվեցան։

ը. Երգեցողութեան մէջ, որի ուսուցիչն է Ջիւանեան քահանան, օրիորդները նոյնպէս բաւական լաւ էին։

Հոգաբարձութիւնը գնահատելով ամենեցունց անխոնջ աշխատասիրութիւնը, սրբազան պարտք համարեց իրան, օրագրաւ ի 16 յունիսի շնորհակալութիւն յայտնել պ. Ջաշիտեանցին առանձնապէս և միւսներին առհասարակ, վարձատրելով օր. Մատինեանին իրա ձրի դասատուութեան և վարժուհութեան համար մի ոսկեայ ժամացոյցով իրա պարանոցի ոսկեայ շղթայով և դարձուցանելով պ. Ջաշիտեանին յունիսի 11 ին տուած հրաժարականը, առաջարկել շարունակել իրա տեսչական պաշտօնը, չընայելով մի քանիսի անխելք հայհոյեանքներին։

Անցան մէկ դասատունից միւս բաժանմունք համաձայն եղբակացութեան մանկավարժական ժողովոյ ի 11 յունիսի։

Նախակրթարանից պատրաստականի առաջին բաժանմունք ութ օրիորդներ պատրաստականի ա. բաժանմունքից բ. բաժանմունք քսան և մի հոգի. պատրաստականի բ. բաժանմունքից ա. դասատուն տասն և երկու օր. առաջի դասատունից բ. դասատուն ինն հոգի։

Վերջացրին իրանց ուսման ընթացքը վկայականներով չորս աշակերտուհիք այն է՝ օր. Ղօրղանեան, Բայիանդուրեան, Թորոսեան և Ներսիսեան, իսկ միւսները, ինչպէս և միւս դասատներում, մնացին համաձայն կանոնագրութեան դպրոցիս, երկրորդ տարի։ Այս ուսումնաւարտ օրիորդներն, եթէ կը կամին և մնալ, հոգաբարձութիւնը մտադիր է պարապեցնել հայերէն լեզուով, թուաբանութիւնից, կոտորակներով և կարուձևով առանձնապէս, երկրորդ տարի մնացած օրիորդների հետ, կազմելով և ապագայում առանձին մասնագիտական դասատուն, ուր գլխաւոր պարապմունք ունի լինել կարուձևը հանդերձ դասատուութեամբ երկու յիշեալ առարկաներից։

Մի քանի աշակերտուհիներին նշանակեցաւ վերաքննութիւն, երեք օր. արձակվեցան ծոյլութեան համար, իսկ չորսը դուրս գնացին իրանց ընտանեկան պատճառներով։

Հոգաբարձութիւնը, ինչպէս յայտնի է «Արարատ» ամսագրից 1881 ամի համար 8*), այս ուսումնարանը ընդունեց շատ անախանձելի դրութեան մէջ, որովհետև կար միայն մի դասատուն, 14 թոշակաւոր աշակերտուհիք, որոնք վճարում էին մէկ ռուբլուց մինչև երեք ռուբլի, այն ևս շատ դժուարութեամբ, 1 վարժուհի օր. Փիլիպոսեանը և 1 ուսուցիչ պ. Դիվանեանը և վերջապէս վճարեց մինչև 250 ռուբլի այրուհու Շանշեանցի տան վարձը, որպիսի աշակերտուհիների թիւը օր ըստ օրէ բազմացաւ, թէ և դրպրոցը ժամանակ առ ժամանակ կրում էր զանազան հարուածներ չարամիտ մարդկանցից, իսկ այս վերջի տարումը աշակերտուհեաց թիւը հասաւ մինչի 135 հոգի, պ. Ջաշիտեանցի աշխատութեամբ, ուսուցչաց մինչի 8 և վարժուհեաց 2-ին։ Հոգաբարձութիւնը ընդունելով իւր հսկողութեան ներքոյ ուսումնարանը իսկոյն վճարեց Շանշեանցի պարտքը և ապա իրա տասն ամեայ կառավարութեան ժամանակը՝ փոքր առ փոքր ամրացոյց դպրոցի գոյութիւնը մի կողմանէ ձրի դասատուութեամբ, իսկ միւս կողմանէ ժամանակ առ ժամանակ զանազան նուիրատուութեամբ, որպիսի դժուար դրութիւնը սկզբում հոգաբարձուներից մի քանիսին պատճառ եղան իրանց պաշտօնից հեռանալու, որ չիցէ ուսումնարանը փակվի և իրանք ևս ամոթահար լինին։ Այս անձինքը հեռացան ոչ թէ իբր զօրաւոր ոյժեր, զզվելով հոգաբարձութենից, ինչպէս յիշած էր «Մշակ» լրագրի մէջ, այլ որպէս անզոր և իրանցից յոյս չունեցող գործող անձինք. մնացեալքը այն է՝ այժմեան հոգաբարձուքը՝ որոնք յուսակտուր չէին լինում այլ ընդհակառակն անդադար աշխատում էին, կարացին գործը այնքան առաջացնել՝ որ վերջապէս դպրոցը ապահովացրին իրա արդիւնքով և յայտնեցին 1879 թուին ուսումնարանը բոլորովին ձրիավարժ դպրոց, տալով 35 հաբաւոր օրիորդներին հարկաւոր տարեկան ուսումնական պիտոյքները։

Հոգաբարձութիւնը ապահովացրեց ուսումնարանի գոյութիւնը հետագայ միջոցներով։

ա. Նորաշէն եկեղեցւոյ գաւթի մէջ համաձայն կամաց Վեհափառ Կաթողիկոսի տեառն տեառն Գեորգայ Դ-ի, շինեցաւ երկհարկանի աղիւսաշէն տուն ի ձեռն երեցփոխանի Նորա Նոյն ինքն է և հոգաբարձու Ստեփաննոսի Ստեփանեանց, բաղկացեալ վերին հարկում հինգ սենեակ և երկու նախասենեակ, իսկ ներքևի հարկն չորս սենեակից, արդեամբք եկեղեցւոյ և օժանդակութեամբ հոգաբարձու Զաքարիայի Թամամշեանց, որն պարգևեց հազար ռուբլի, բացի այս գումարից, մտադիր է որ այս տարի ևս ներքևի հարկում սենեակներից մէկն կրկին իւր ծախսով սուաղել տայ, որ դառնայ այնուհետև դասատուն։

*) Հոգաբարձութիւնը հաստատուած է Վեհափառ Կաթողիկոսից կոնդակով ի 22 հոկտ. 1871 ամի № 213։

բ. Աւելի ապահովելոյ համար ուսումնարանի գոյութիւնը, հանգուցեալ Նորաշէնու աւագ քահանայ տէր Սրապիոն տէր Մովսեսեանցը, 1873 թուին, տեսնելով որ իւր ազգական Տփխիսայ պատուաւոր քաղաքացի Սօլոմոն Դուզանեանցը, Դանձակից եկած էր Թիֆլիս տկարութենից բուժվելու համար, բայց տկարութիւնը օրէցօր ծանրանալով մօտեցնում էր նորան մահուան դուռն, ուստի նա Դուզանեանցը չունենալով ժառանգ, համոզմամբ յիշեալ Սրապիոն աւագ քահանայի, ընծայեց ուսումնարանին Դանձակում ունեցած իւր Քարվանսարայի չորրորդ մասն, որ այսօր բերում է ամսական վաթսուն ռուբլի։

գ. Դպրոցի գոյութիւնը ապահովվեցաւ և նրանով, որ հոգաբարձու պարոն Գրիգոր Իշմիրեանցը նուիրեց իրա չորս հարկանի աղիւսաշէն տունը իրա եօթը կրպակներով և երեք նկուղներով մերձ Թուրքի մէյդան կոչեցեալ տեղի, որպիսի տունը կապալագրամ տալիս է ամսական հարիւր ռուբլի։

և դ. Բացի սորա՝ դպրոցը իւրաքանչիւր ամիսը ստանում է քսանական ռուբլի եկեղեցական արդիւնքից համաձայն ընդհանուր կարգադրութեան Նորին Օծութեան տեառն տեառն Գէորգ Գայ Դ։

Եթէ վերոյիշեալ կալուածների արժողութիւնը հաշուենք ընդունած սովորական տոկոսիքով անշարժ կայքից հարիւրին եօթը, այն ժամանակ մենք կը գանք այն եզրակացութեանը, որ Հոգաբարձութիւնը իրա տասնամեայ կառավարութեան միջոցումը վաստակել է դպրոցի համար աւելի քան 34,000 ռուբլու կայք։ Այս հաշուով և ընծայած չորս հարկանի տունը Թուրքի մէյդանի մօտ կարժէ 17,000 և ոչ թէ 7000 ռուբլի, որ ըստ ասութեան „Մեղու“ լրագրի յօդուածագրի, վճարել է Նորաշէնու եկեղեցին պարոն Անդրկովկասեան Պրիկազին, որպիսի գումարը կամեցել է նա մատնացոյց անել նուիրատուութեան արժանաւորութիւնը թլացնելու. բայց թո՛ղ այս ևս նորա անհիմն և կրքերից առաջ եկած խօսքերի ապացոյց լինի։

Այս դպրոցումը ուսուցանում են կրօն, հայոց և ռուսաց լեզուք, թուաբանութիւն, հայրենագիտութիւն հանդերձ ընդհանուր մեկնութեամբ, նկատողական ուսում, գծագրութիւն, հայոց և ռուսաց լեզուի վայելչագրութիւն, երգեցողութիւն և կարուձև, որպիսի առարկայքը յոյժ և յոյժ բաւական են ստորին դասերու մարդկանց օրիորդաց համար, որոնց մէջ հոգաբարձութիւնը մտադիր է գլխաւորապէս տարածել գրագիտութիւն և կարուձևի արհեստը, բայց որ առաջ ընթացողներին ուսման մէջ արգելք չը լինի, հոգաբարձութիւնը վճռեց պրոգրամման հարմարացնել Գայիանեան օրիորդաց դպրոցի երկու դասատունների պրոգրամմայի հետ։

Նորաշնու Մարիամեան օրիորդաց ուսումնարանը զանազանվում է ոչ միայն նրանով, որ սա միակ և բոլորովին ձրիավարժ

դպրոց է Տփխիսում, այլ և այն պայմանով, որ սա միակ բարեկարգած և ապահոված ժողովրդական դպրոց է, որովհետև միւս դպրոցները կառավարվում են կամ ընկերութիւններով և կամ թէ մասնաւորի կամքն, ինչպէս են օրինակ՝ Գայիանեան, Օնանեան և Հալաբարու օրիորդաց ուսումնարանները, և ոչ թէ ժողովրդով ընտրած հոգաբարձուներով և բացի սորան Մարիամեան դպրոցի կալուածները նոյն իսկ Նորաշնու եկեղեցու անուամբ են՝ քանի որ ընկերութիւնով ձեռք բերած փողերը համարվում են նորա անդամների և ոչ թէ եկեղեցական սեպհականութիւն, որի հիմանց վերայ և վաստակած փողը կայ բանկումը նոյն իսկ և կամ թէ նրանցից մի որևիցէ անդամի անունով. ուրեմն իսկ ժողովրդական բարեգործական բարեկարգած ուսումնարանը այս Մարիամեան դպրոցն է և ոչ թէ որևիցէ միւս ուսումնարանը։ Այժմ տեսնենք թէ ինչից է առաջանում այսքան տարաձայնութիւնը այս ուսումնարանի դէմ, որովհետև այս վերջի տարիները «Մշակ» և «Մեղու» լրագիրներում մի քանի անհեռատես անձինք սկսան արձակվել սորա դէմ, շը լինայելով իրանց անտեղի զրուածով մինչև անգամ դպրոցի գոյութիւնը։

Առաջի պատճառն այն է, որ այս ուսումնարանը միակ բարեկարգած, ապահոված և ժողովրդական դպրոց է և ուրեմն աւելի մատչելի է սորա և նորա դիտաւորութեանց ըստ նպատակին քան թէ միւս դպրոցները, որոնք ունին իրանց մասնաւոր տերէր։ Խարդախ և կամ աւելի յաւ ասաց միքանի շահասէր ուսուցչաց նպատակն այն է՝ որ ուսումնարանի շրջանը, որքան կարելի է, սահմանափակել և ի տեղի երեք և չորս դասատունների գոյացնել մի և կամ երկու դասատուն, որ կարողանան ստանալ մի նշանաւոր ամսական ռոճիկ կամ դասական վարձ փոխանակ այժմեան յիսուն կոպէկի իւրաքանչիւր դասի մէկ ժամի համար, որի պատճառաւ ուրեմն իրանց շահասիրութեան համար կամենում են զոհել ընդհանուրի օգուտը, որովհետև ուսանողաց թիւը աւելի փոքր կը լինի, քան թէ չորս դասատունների մէջ. իսկ միւսները, որոնք շնորհք չունին առաջացնել մի որևիցէ ընկած դպրոցը, կամենում են պատրաստած և ապահոված դպրոցով վայելել ազգասիրութեան փառքը, որի նպատակաւ գրգռում են այս և այն վարժապետին, խոստանալով զանազան յոյսերով մի նշանաւոր ռոճիկ կամ դասական վարձ նշանակել, եթէ կը յաջողայ նրանց ձեռք բերել ուսումնարանը, երբ որ հոգաբարձութիւնը ամէն միջոցները—թէ թատրոնական, թէ իրեղինաց խուզարկութեան և թէ բարերարականը—արդէն փորձել է և ի վերջոյ հասել է այնպիսի մի յուսահատութեան, որ բոլոր յիշած միջոցները դադարեցրել է, աշխատելով աւելի հիմնաւոր կերպիւ ապահովացնել դպրոցի գոյութիւնը։

Երկրորդ առիթն այն է՝ որ դպրոցումը կայ և տեսչական

ռոճիկը ամիսը երեսուն ռուբլի, որն որ դասերով հասնում է իբրաքանչիւր ամիսը բացի արձակուրդներից 45 մինչև 50 ռուբլի, որպիսի գումարը, ինչպէս ցոյց է տուել փորձը, ժամանակաւ ժամանակ դառնում է կուուածաղիկ և տեղիք է տալի այլ և այլ ինտրիգաններին, ինչպէս այս վերջին ժամանակը ամենասոր հնարքներով կամենում էին ձեռք բերել Առաքելեանցը և Դովլաթբէկեանցը այն գումարը սուտ և անխղճմտանք լուրեր տարածելով, դէպի պ. տեսուչ Ջաշիտեանցը։

Տարակուսութիւն չը կայ, որ այսպիսի մտածմունքներ չեն կարող առաջանալ ոչ Մօղնու Գայիանեան և ոչ թէ յանուն կուսանաց Օնանեան ուսուցիչների դէմ, որովհետև այն տեղ կան մասնաւոր և ոչ թէ ժողովրդական հոգաբարձական կառավարութիւն։

Երրորդ պատճառն էլ այն է՝ որ մեր մատաղահաս ուսուցիչները իրանց վերայ մեծամեծ կարծիքներ ունին և իրանց չնչին գիտութիւններով ոչ ոքին չեն հաւանում, թէև լինին սրանք բարձր ուսումնարաններից. ցաւում ենք, որ նրանք շատ կարճատես են բանի մէջ, որովհետև այսպիսի վարմունքով նրանք կարող են զզուացնել ամենքին թէ նուիրատուողաց և թէ միւս աշխատասէր անձանց, զրկվելով վերջ ի վերջոյ և այն փոքրիկ վարձատրութենից, որ այսօր ստանում են նրանք իրանց դասատուութեան համար։ Եթէ այսպիսի անձինք և նրանց հետ փառք փափագող մարդիք զօրութիւն և կարողութիւն ունին, թող դիմեն միւս ծխական օրիորդաց ուսումնարաններին, որոնք կարօտ են այսպիսի միջամտութիւններին, տիկին Կիրակեանի Աւետեաց եկեղեցւոյ անունով և Հանդուցեալ Թանդոյեանի Սուկիու սուրբ Աստուածածնայ անունով օրիորդաց ուսումնարանները, նոյնպէս և Հաւլաբարու օրիորդաց ընկերութեամբ կառավարուող դպրոցը միանգամայն կարօտ են զօրեղ ոյժերին, թող այս «Մշակ» լրագրի մէջ անանուն յիշած զօրեղ համարեալ ոյժերը և մեր կառավարված Մարիամեան դպրոցի դէմ գործող և փառք փափագող անձինքը մտնեն այնտեղ և բարեկարգեն դպրոցները, որպիսի աշխատասիրութեան համար՝ թէ տիկին Կիրակեանը և թէ միւսները շատ ու շատ ուրախ կը լինին, որովհետև այս տիկինից առաջ բերած ուսումնարանը տասը տարուց աւել է, որ Վեհափառ Կաթողիկոսից նշանակած հոգաբարձուքը մինչև անգամ ոտը չեն կոխել այն տեղ։ Հոգաբարձութիւնը չէ կարող լուութեամբ անցնել և այն անվայել ստախօսութիւնը, որ գրել էին „Մշակ“ և „Մեղու“ լրագիրների մէջ՝ այս տարուայ դուրս գնացած ուսուցիչները, որոնց վարչութիւնը հարցաքննութենից յետոյ անշուշտ կարձակեր, եթէ իրանք, զգալով իրանց մեղքը, չարձակվեին յառաջագոյն իրանց ինդիրքներով, որովհետև պ. Դ. փոխանակ հայրենագիտութեան պարապել էր գլխաւորապէս մաթեմաթիկական աշխարհագրութեամբ, այն էլ բոլորովին խառնուբշտոր, թէև շատ անգամ նկատած էր նորան այս մասին, բացի սորա որ գծագրութեան մէջ յոյժ և յոյժ թոյլ էին, իսկ պ. Ա... կրօնի դասատուութիւնը, կարող ենք ասել թողել էր առանց ուշադրութեան, թէև նրան ևս յանձնած էր անցնել ըստ պատուերի հոգաբարձութեան. թէ ինչ էր սորա պատճառը, այս իրանք լաւ գիտեն։ Եթէ մտածում էին, որ այսպիսի վարմունքով և կամ թէ հարցաքննութենից մի քանի շաբաթ առաջ դուրս գնալով, կը խանգարեն դպրոցի ուսման ընթացքը, նրանք անչափ սխալվեցան, որովհետև դուրս գնացած բոպէից հոգաբարձութիւնը նրանց տեղը ընդունեց ուրիշ ուսուցիչ տեսչի առաջարկութեամբ։ Այսպիսի վարմունքը, իրանք էլ կը խոստովանեն, որ անվայել էր ամեն բարեմիտ և բարեկիրթ անձին, ուր թէ նրանց նման մարդկանցը, որոնք իրանց վերայ այնքան վստահութիւն ունին իրանց գիտութիւններով։

Բայց ինչ որ կը պատկանի այն մասին, որ Պ. Տեսուչ Ջաշիտեանը հոգաբարձութեան նստի ժամանակը ներկայացել է անվայել կերպով և կամ թէ սրով, այս ստութիւն է, որովհետև ոչ մէկը և ոչ միւսը չէ եղել. վերջապէս եթէ նա ունենար ևս իրա հետ մի սուր աւազակների դէմ գործ դնելու գիշերային ժամանակը տուն գնալիս, սա մի յանցանք չէ։ Եթէ շատերը կարող են ունենալ ատրճանակներ, նա էլ, ուրեմն, կարող էր ունենալ և մի սուր ամեն իրա վերայ արձակված մարդու դէմ, իբր մի աւազակարարոյ մարդու դեմ. եթէ այսպիսի կերպով պախարակող անձինք կարծում են հասնել իրանց նպատակին, թող չը մոռանան, որ հոգաբարձութիւնը մի չնչին կրքոտ և շահասէր անձանց գրութեամբ ոչ իրան և ոչ թէ իրա տեսչին չի դարձնի խաղալիք սորա և նորա կամաց համեմատ փոխել տեսչին և կամ թէ վարժապետին։

Նոյնպէս անհիմն է և այն, որ Ջաշիտեանը իբր թէ իրա փողերի և տոկոսների հաշուատեսութենով և կամ թէ միայն կաւիճներ և մատիտներ գնելովն է զբաղուած և ոչ թէ ուրիշ իրա տեսչական պաշտօնով. նա մեղաւոր է միայն նորանում, եթէ այս մեղք է, որ նա միշտ ճշգութեամբ է պահանջել իրա ստորագրեալ ուսուցիչներից սրբութեամբ կատարել իրանց պաշտօնը և ոչ թէ յետ ու առաջ գալ կամ մտնել դասատուն, ինչպէս արել են առաջ և ինչպէս նորա ժամանակը ևս կամենում էին շարունակել։ Սորա հաստատութեան համար կը բերենք այս յետագայ փաստերը. Նախ՝ պ. Դովլաթբէկեանցը կարծում ենք որ չի լինի մոռացած այն իւր յանցաւորութիւնը որ մատաղահաս օրիորդներին քանոնով էր պատժում և յետ քանի մի նախազգուշութենից, որին արել էր տեսուչն դադարել այդպիսի մի արգելուած վարմունքից, ապա խառն ժողովում ապացուցուեցաւ վկայիւք այս եղելութեան ճշմարտութիւնը, որից յետոյ նա սկսեց իւր ատելութիւնը դէպի տեսուչն։ Իսկ ինչ որ կը վերաբերի պարոն Առաքելեանցի, դէպի

տեսուչն՝ անքաղաքավարութիւնը (որի մասին՝ ըստ պահանջման հերթական հոգաբարձու Գր. Իզմիրեանցի՝ խնդրեց ներողութիւն պ. Զաշտեանցից)՝ նախ արտաքոյ ուսումնարանի և ապա իսկ ուսումնարանում; միայն այսքանս բաւական համարելի է տեղեկանալ ընթերցողներին թէ պարոն Առաքելեանցը կուրացած իւր կրքերից չենք ասիլ թէ ամենայն պատահած ժամանակ տեսչի յետ ինչ հաթաթէք է տուած. միայն այսքանը կասենք թէ յունիսի 4 ին ինչ անկարգութիւններ արեց ուսումնարանում վարժապետների առաջ՝ հայհոյելով տեսչին պաշտօնավարութեան ժամանակ ուսուցչական սենեակում՝ թող ինքն մտաբերէ և խղճահարի։ Որ սա անհամեմատ բարձր է իրա վերայ խօսողներից՝ այս արդէն փաստ է և ամենեցունց լաւ յայտնի է։

Աւելորդ չենք համարի յիշել և այն մասին, որ Հոգաբարձութիւնը ուրախութեամբ կընդունէր նորա այստեղացի օրիորդաց գիմնազիում ութերորդ դասատան դիպլոմով և ուսուցչական կոչմամբ աւարտող աղջկան իրա դպրոցի գոքը—միայն թէ համապատասխան լինէր գործին հայոց լեզուից—եթէ սա կը կամենար մտնել մեր դպրոցը—նա մանաւանդ որ այսպիսի ընդունելութեամբ վերջ կը դնէր և ինտրիգաներին՝ որոնք ոչ մի օտարի վրդովմունքներով այլ ևս տեղիք չեն ունենալ։

Վերջապէս նորա ընդունելութիւնը ինչ վնաս կարող է բերել դպրոցին՝ երբ որ հերթակալութիւնը հոգաբարձուաց և հարցաքննութիւնը լինում են իրան կարգաւ։ Այսպիսի իրողութեան դէմ կարող են խօսել կարճատես և ոչ թէ հեռատես մարդիք։ Վերոյիշեալ տեղեկութիւններից ամէն բարեմիտ անձն կը հասկանայ՝ որ Հոգաբարձութիւնը իրա տասն տարուայ կառավարութեան մէջ այս Մարիամեան օրիորդաց ուսումնարանը ոչ թէ ոտի է կանգնացրել՝ այլ և բաւականին հիմնաւոր միջոցներով ապահովացրել է դպրոցը՝ որն որ՝ իրը բոլորովին ձրիավարժ և օժնդակութիւն տուող աւելի չ՝բաւորացն՝ ամբողջ Տփխիսում միակ ժողովրդական ուսումնարանն է՝ ուստի աւելի քանթէ պարզ է մի քանի սի անհիմն և կրքերից առաջ եկած արձակումները՝ որոց ժողովուրդը՝ այս ունենք՝ հաւատ բոլորովին չի ընծայի՝ փարատելով և իրա կասկածաւոր համոզմունքը՝ եթէ որ և իցէ կերպիւ չարամիտ և շահասէր անձանց գրչով սխալմամբ առաջ է եկել նրա սրտումը։

Նախագահ Գ. ա. ք. Տէրտէրեանց

Հոգաբարձուք՝ Գրիգոր Իզմիրեանց
Ստեփան Ստեփանեանց
Զաքարիայ Թամամշեանց

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Августа 1882 г.
Типогр. М. Вартаніянца и К-°. Тройц. переулокъ № 11.

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014391